Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 25 -ի N 804 - Ն որոշման

«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ԺԱՄ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՑՎՈՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասին համապատասխան՝ հայցվորին մինչև երկու ժամ տևողությամբ իրականացված հաշտարարության դիմաց հաշտարարի վարձատրության գումարի վճարման համար պետական բյուջեից փոխհատուցում վճարվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, իրականացվել է պարտադիր հաշտարարություն, որը չի ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ և կազմվել է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն.

2) պարտադիր հաշտարարության ավարտից հետո նույն անձանց միջև նույն առարկայի մասին և նույն փաստական հիմքերով գործով դատարան ներկայացվել է հայցադիմում.

3) հայցը մերժվել է կամ մասնակի է բավարարվել.

4) հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից կամ դատարանը կիրառել է նման արտոնություն:

2. Հայցվորին պետական բյուջեից փոխհատուցումը վճարվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ հայցվորի կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացված դիմումի հիման վրա:

3. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված դիմումին կից ներկայացվում են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի և անձը հաստատող փաստաթղթի

պատճենները, ինչպես նաև հաշտարարության տևողության, հաշտարարության սկզբի և ավարտի մասին նշում պարունակող հաշտարարության ավարտի արձանագրության պատճենը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ